

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԵՐ:

Ելեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:



Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Утп түшілтөрө - Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Դ. Ա. Բաղդասարյան



Արցախյան
Ազատամարտ

Հուշագրություններ

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ





Դ.Ս. Բաղդասարյանը

1947-1970 թվականներին հեղինակը ծառայել է հակաօդային պաշտպանության հրետանային ու հրթիռային զորքերում (Գորկի,

Օդեսսա, Բարու, Յուս. Ուրալ, Յեռ. Արեւելք, Սախալին,

Մերձբաթիկա, Յայաստան): Զորացրվելուց հետո ավարտել է

Երեւանի պետական համալսարանի իրավաբանական

ֆակուլտետը: Այժմ Երեւանի տնտ.-իրավաբանական

համալսարանի պրոֆեսոր է:

Դ. Ս. Բաղդասարյան

ԴԻՄԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

(հուշագրություններ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիրք 1

Յեղինակի կողմից	4	
Գլուխ 1. Քառս	4
Գլուխ 2. Նախապատրաստվում Ենք անհրաժեշտ պաշտպանության	8
Գլուխ 3. Բարձրունու պաշտպանությունը, հանդիպում «Մեծն Տիգրան» գորամիավորման հետ եւ առաջին լուրջ հակահարվածը հակառակորդին	12
Գլուխ 4. Կանոնավոր ազգային գվարդիա ստեղծելու նոտահացման եւ իմ գերության մեջ հայտնվելու մասին	20
Գլուխ 5. Աղբրեջանի տաճարաններում	32
Գլուխ 6. Դատուկ գնդի, սպաների միության եւ պաշտպանության կոմիտեի ստեղծումը	54
Գլուխ 7. Սովետական բանակի եւ ներքին գործերի պատժից գործողությունները Աղբրեջանի հայարնակ շրջաններում ու Դայաստանի տարածքում – «Օղակ» օպերացիան	58
Գլուխ 8. Արցախյան ազատամարտի հաղթանակի նախապայմանները, այդ պայքարին շրջադարձ տալու փորձեր: «Ղնեպը» հրետանային միավորման ստեղծումը Զանգեզուրում	68
Գլուխ 9. Շահումյանի շրջանի հերոսական պաշտպանությունը	77
Գլուխ 10. Շուշիի ազատագրումը եւ Լաշինի միջանցքի բացումը	110
Գլուխ 11. Կապանի պաշտպանությունը	123
Գլուխ 12. Մահապարտության դիմելու կոչեր եւ «Արծիվ» ջրկատմեր	138
Գլուխ 13. Արծվաշենի հանձնումը, որով ավարտվում է հայ–աղբրեջանական պատերազմի ֆիդայական փուլը	144
Գլուխ 14. Դատուցում ճշմարտության դեմ չգնալու համար	152
Գիրք II.		
Մտքեր ու մտորումներ	166

Առյօն հայշագրություններում ներկայացված են արցախյան
պատռամարտի իրադարձությունները և նվիրված են նահատակ-
իւած ու կենացածի ազատամարտիկների լիա նիշտառակիւն:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՀԵՂԻՆԱԿԻ
ԿՈՂՄԻՑ ԿԱՄ Ո՞Վ ԵՄ ԵՄ

Հավանաբար ես առաջին ավագ սպա ֆիդային եմ, որ 1989 թվականից Նվիրվել է-ի մեր ժողովրդի ամերածեցած պաշտպանության սրբազն գործին: Ին մասնակցությունը հայ-աղբյութքանական զինված հակամարտությանը սահմանափակվում է 1989-1992 թվականներուն: Երբ 1992թ. աշնանը մեր ազգային բանակի առաջին գորամասերը գուրս բերվեցին սահմանամերձ շրջաններ եւ իրենց վրա վերցրին երկրի պաշտպանության ֆունկցիան, ժողովրդիս հանդեպ պարտը համարեցի պատվով կատարած եւ անցա ին սիրելի խաղաղ աշխատանքին՝ երիտասարդության ուսուցմանը:

Մերձավորներն ինձ այլորուիստ են համարում: Իրոք, ես չեմ կարողանում հարմարվել ու համագործակցել այն մարդկանց հետ, որոնց համար նույնիսկ պատերազմ ենսափրական նպատակների իրականացնան միջոց է, իսկ անգուսայ շահամոլությունը բոլոր առաջինություններից ամենագերադասներին: Իմ բնական ազնվությունն ու անհանդուրժողականությունը չափ հանդեպ, որից ինք էլ տուժում եմ, հաճախ որպես չիշտություն է գնահատվում պաշտոնատար անձանցից: Միևնույն ժամանակ ես շատ հաշտ ու համերաշխ համագործակցում եւ բարիացակամ հարաբերությունների մեջ եմ լինում տարբեր բնագավառի մարդկանց ու երիտասարդության հետ, իսկ որոշ դեպքերում մեծ հեղինակություն եմ վայելում:

Ալտրուինզը, որը համախ շփոթում են կենցաղային անգործնականության հետ, ինձ փոխանցվել է մառանզարայ: Պատմում են, որ իմ Սկրտիչ պապին ամշահախնոյիր ու իր համագույղացիների ճակատագրով նուակոցված մարդ է եղել: 1918 թ. ղեկավարել է Կապանի շրջանի Ազգարակ գյուղի ինքնապաշտամությունը: Թուրքենոց շատ են փորձել գրավել այդ գյուղը, բայց ապարդյուն: Ասում են նաև, որ Անդրամիկը Զանգեզուրում շրջագայելիս, Ազգարակի մասուցներում թուրքերի շատ դիակներ է տեսնում, այդ կապակցությանք սեղմում է պապին ծերջն ու ասում: «Ես այստեղ անելիք չունեմ»:

Իմ հայրը՝ Սուրեն Ակուտիկի Բաղդասարյանը, հայկական 89-րդ փառապանծ ~~Խորհրդային~~ դիվիզիայի 400-րդ գնդի կոմսարքն էր, զոհվել է Երևանի մահով, 1943թ. փետրվարի 9-ի լույս 10-ի գիշերը՝ Կրասնոդարի երկրամասի Գարբուզովայա Բալկա գյուղի մոտ տեղի ունեցած կատարի մարտում՝ իր մասին բողներով բազմաթիվ գրավոր հիշողություններ եւ պայծառ հիշատակ բոլոր նրանց հոգում, ովքեր ճանաչում էին իմ քաջականությունը:

Այս բոլորից հետո պարզ պետք է լինի, որ ես ծագումնաբանորեն չեմ կարող ան-
տառընթաց դիտողության, եթե իմ մոռովորին նորից մտանա եմ ապահովություն:

Ինչ վերաբերում է աշխարհականացքին, ապա ես իմ հական կոմունիստ եմ համարում, չնայած ԱՄԿ-ից ինքնական դոլըս եմ եկել դեռ 1989թ. Շոյենքերին, կուստոն-սը ունանց ննան չեմ այրել խելագարկած ամբողների աջեմ, այլ համապատասխան գրավոր հայտարարությանը ուղարկել եմ Գորբաչովին, եթզ հանգվել եմ. որ կուսակցության դեկավարությունը դավաճանել է սոցիալզմին, ծախսել է միջազգային իմացերիականին եւ բարեփոխումների քողի տակ ըլուժուական ռեֆորմացիա է հրա-

գործում: Ես եղել ու մնամ եմ ստիհակիցի վեհ զաղափարներին ու իդեալներին նվիրված, քանի որ նրանց չեն մեղավոր, որ ժողովուրդների իրական երայրությամբ հյուսված մեր եզակի ու անկրկնելի հզոր պետությունը կործանվեց մի քանի ռենեգատների ու օտարերկրյա հետախուզությունների կողմից հավաքագրվածների ջամարերով, որոնք հմտորեն օգտագործեցին ժողովուրդների մոլորությունը:

Ազգային հարցում ինտերնացիոնալիստ եմ, բայց իմ հարգատա ժողովրդի ու վայականական հայրենիքի շահերը առաջնահերթ եմ համարում եւ միշտ պատրաստ եմ եղել պաշտպանելու այն թե խոսքով եւ թե գենքով: Երբեք ազգամիջան բախումների սարդիչ, կազմակերպիչ կամ կողմնակից չեն եղել. գրծել եմ անհրաժեշտ պաշտպանության պայմաններում: Որպես հնուտ պրոֆեսիոնալ գինվորական պաշտպանել եմ հարձակման ենթարկված իմ ժողովրդին: Պետք է խոստովանեմ, որ անհրաժեշտ պաշտպանության ընթացքում մեծ վնաս եմ հասցրել քշնամում, ինարավոր Է նաև ամենա նարդկանց, չնայած միշտ գործել եմ ասպետական օրենքով ու պատրազմի կանոններով առանց ազգամիջության եւ ինձ համար անընդունելի դաժանության: Հակառակորդ կամ քշնամի եմ համարել ոչ միայն ազերիներին, այլև այն ժամանակ նրանց օժանդակող ռուսներին եւ մեր ժողովրդի դեմ գենքով դուրս եկած այլազգիներին:

Որքան ավելի ենք հեռանում արցախյան ազատամարտի ֆիդայական փուլի իրադարձություններից, այնքան ավելի ակնհայտ է դառնում հյա կամավորական աշխարհագործի հաղբանակմերի ու դաշը պարտությունների ծընարտացի տարեգործության ամերախեցությունը, քանի որ նոյն պատմությունները կարող են կրկնվել այլ այլանոնքում։ Սույն մենուարները նվիրված են դրան եւ, երեխ, առաջին փորձն է հասարակությանը մերկայացնելու մեր նոր ազգային հայրենական պատերազմի հետ կապված իրադարձությունները։ Որոնց կենտրոնում է եղել գրի հեղինակը։ Ես մկանագրում եմ միայն 1989-1992 թվականներին տեղի ունեցած այն դեպքերն ու մարտական գործողությունները, որոնց անմիջական մասնակիցն կամ կազմակերպիչն ին եղել, այսինքն՝ ուրիշների սասաներով կամ պատմածներով չեմ դեկապարփել։ Իմ ունակությունների սահմաններում փորձել եմ ցույց տալ արցախյան ազատամարտի զիսավոր եւ միակ հերոսի՝ ժողովրդական կամավորական աշխարհագործի դերը Արականի եւ Հայաստանի ամստանութեամ համար որովացնելու առաջարկություն։

Գիրքը գրվել է 1993-1995 թվականներին հեռևս չափարարված պատերազմի թարմ հետքերով. հետազայտ ենթարկվել է ին անձնական ցեղզուրային. ազատվել է արդարացի, բայց խիստ քննադատական բնույթ կրող որոշ համաժմերից. որոնք Ենթային բարդ ու ամորոշ ռազմաճակարգական պայմաններում կարող են կրթելի բրո-ըրնան արեւ հանուխանա:

Ես չեմ ծգտել գունազարդիկ իրականությունը հայ քաջորդիների արյամ գույնով կամ արյան վերաբերյալ դատարկաբանությամբ, աշխատել եմ լինել անաշառ ու չափից դրւու ամենեղ ու ծշմարտացի՝ հաշվի չառնելով կենդի դիվանազիտության կանոնները: Ռազմաքաղաքական ընդհանուրացումներում արտահայտել եմ իմ անձնական նարտական փորձից ու աշխարհականացքից քիսող տեսակետները, որոնք դուք չեն գտ այսօրվա մեր նառավապարհներին եւ այլ «ուժեղների»:

ԶԱՌՈՒՄ

1988թ. փետրվարի սումգայիթյան ցեղասպանությունը չէր կարող կազմակերպված լինել միայն Ադրբեջանի իշխանությունների կողմից: Սովետական Սիուլրունը և ՍՍԿԿ-Ծ իր ամենազոր քաղաքուրոյնվ. դեռևս ողջ էին: Կարծում եմ, որ Սունգայիթի հայ բնակչության կոտորած կանխամտածված եւ թույլատրված է եղել «պերսորոյկայի» գլխավոր ճարտարապետի եւ նրա հանցախմբի կողմից...

Դարաբայան հարցի վերաբերյալ զորքաչովյան վարչակազմի անհերեք ու սպառիչ որոշումները եւ դրանց իրագործման նպատակով կիրավիր ուժային մեթոդներն էլ ավելի էին ապակայունացնում իրադրությունը ։ Յայաստանում և ամբողջ Անդրկովկասում: Սովետական բանակի եւ Ներքին զորքերի զորամասերը ոչ միայն օժանդակում էին Ադրբեջանի հայարակմանը, այլև էին հրենք էին թափում հայ խաղաղ բնակչության ու սակավազոր հնքնապաշտանության ջոկատների մարտիկների արյունը, ադրբեջանական ՕՍՈՒՌ եւ բանակային զորամասերի առջև ճանապարհ էին հարթում հայերի ցեղասպանությունը շարունակելու համար: Այդ նպատակն էր հետապնդում, օրինակ՝ 1991թ. «Օղակ» օպերացիան ռուսական ու ադրբեջանական զորքերի համատեղ հարձակումը ։ Շահումյանի եւ Սարդակերտի շրջանների վրա, 1992թ. ամռանը...

1989թ. Յայաստանի կոմկուսի եւ պետական իշխանության գործումներությունն արդեն կաթվածահար էր դարաբայան շարժմամբ: Սովետական Յայաստանի դեկավարների երկակի վիճակը, սեփական ազգային զորամիավորումների բացակայությունը նրանց գրկել էին երկրի պաշտպանության կազմակերպման հնարավորությունից: Մյու դեկավարների կոպիտ սխաներից մեկն այն էր, որ նրանք չցանկացան ժամանակին անջատվել սոցիալիզմին դավաճանած բուրժուական ուժորնիստներից եւ մնացին այդ վերասերվածների եւ քաղաքական ունեֆատների ենթակայության տակ, ոխու չարեցին իրենց ծեռքը վերցնելու արցախյան շարժման դեկարտությունը եւ ժողովրդի պաշտպանության կազմակերպման նախաձեռնությունը, որի համար ունեին անշափ ավելի մեծ հնարավորություններ, քան «Պարաբար» կոմիտեն:

Յայաստանում եւ Արցախում ստեղծված ժայռաստիճան բարդ իրադրության ու անիշխանության պայմաններում ինքնապաշտպանության կազմակերպման գործն իրենց վրա Վերցրեցին ոչ պաշտոնական կազմակերպությունները: Թվում էր, թե այդ կազմակերպությունները միակամ են մտնում հայոց համազգային շարժման մեջ, սակայն, իրականում, նրանցից շատերը հետապնդում էին իրենց սեփական քաղաքական կամ մերկանտիլիստական նպատակները: Եթե հանրահավաքների հարթակներից այդ կազմակերպությունների մերկայացուցիչներն արտահայտում էին արտաքինապես նույնարնույք մտքեր ու կոչեր, ապա իրական կյանքուն գործում էին միմյանցից անկախ: Պարզապես համազգային վերազրունքի վիրխարի թափը եւ ներ ժողովրդի քաղաքական հասունության բացակայությունը չէին թույլատրում տեսնելու այդ:

Օգտվելով համընդիանուր քառսից ու անիշխանությունից՝ կտրուկ կերպով ակտիվացան հասարակության գորշ եւ հանցավոր տարրերը: Դարաբայան շարժման ալիքի վրա մակերես դուրս եկան բազմաթիվ հրոսակախմբեր, որոնց ներ աչքի էին ընկույն այսպես կայունի հրաժարականը: Նրանք պարբերաբար հայտնվում էին սահմանամերձ գոտիներում եւ «ոչխարի պատերազմ» նշում ազերիների դեմ: Եթե նրանց չէր հաջողված ավար ծեռքը թերեւ հաճախ քշում տանում էին իրեն հայրենակիցների եւ պետական տնտեսությունների անասուններին: Երբեմն էլ հեռու տարածությունից կրակ էին բացում ներքին գործերի պահականետերի կամ աղբեցանական գյուղերի ուղղությամբ: Նրանց տերմինաբանությամբ որ կոչվում էր «բոյ տալ»: Կերաղանակով իրենց որդերը առաջակեններ էին պատրում կատարած «վերագրությունների» մասին եւ դրա հիմնալ վրա հատուկ վերաբերմունք պահնում հարկերի, ռեկտերի կողոպուտի հրավունք:

1989թ. նասսայական դարձան հարձակումները ուսումնական հաստատությունների ու ազգագիտության կարինետների, ռազմականացված հիմնարկների, միջիցիայի բաժինների, դոսաֆի տեխնիկական դպրոցների, հակակալուստերի, պայթուցիկ նյութերի պահեստների եւ այլ օբյեկտների վրա՝ զենք ու հանդերձանք ծեռք քերելու նպատակով: Այն ժամանակ հանրապետությունում չգտնվեց իրադրությունը վերահսկող մի միասնական կենտրոն, որն ընդունակ լինեց կանոնավոր ծեռվոլ լուծել պաշտպանության կազմակերպման հարցերը: Թե որքա՞ն նյութական արժեքների ոչնչացվեցին, փոշիացվեցին ու թալանվեցին խելագարված ամբոխների կողմից՝ միայն աստված գիտե:

Դարաբայան շարժման սկզբին մեծ զապկածություն ու խաղաղամիրություն եր ցուցաբերում Ադրբեջանի հետ սահմանամերձ շրջանների գյուղացիությունը, եւ զապտահական չէր: Սովետական իշխանության տարիներին մարդու ընտելացել է ին իրենց հարեւանների հետ համերաշխ ու խաղաղ ապրելուն, չին ցանկանում նրանց հետ զժուկել, առավել եւս՝ կովել: Ի տարբերություն հանրապետության կենտրոնական շրջանների ու մայրաքաղաքի բնակչության, որն իր կաշվի վրա չէր զգում հետզհետ ավելի բորբոքող հակամարտության հետեւամքը, փաստորեն անպաշտպան ու բախտի քահանույթին թողնված այդ գյուղացիները ներքնապես ըննադատորեն էին տրամադրված մայրաքաղաքի հանրահավաքներում հնչող կոչերի հանդեպ, բայց, վերջինուուր նրանք էլ անխուսակելիորեն ներքաշվեցին պատրագմի մեջ:

ՀՀԸ.Ծ. ՀԱԲ-Ը, ԱԿԲ-Ը եւ այլ կազմակերպություններ հանրահավաքներում արտահայտվող հասարակական կարծիքի ազդեցության տակ ինքնապաշտպանության միասնական հրամանատարության ստեղծման անհաջող փորձեր էին կատարում: Մի քանի անգամ ներկա են նդել այդ նպատակով հրավիրված ժողովներին եւ սրտի մեծ ցավ են զգացել՝ տեսնելով, թե ի՞նչ տեսակ մարդկանց ծեռքը է տվել իր ճակատագիրը սովետական իշխանության տարիներին աննախադեպ վերածնունդ եւ բազմակողմանի վերելք ապրած, աշխարհի բարեկիրը ժողովուրուների շարքում իր արժանի տեղը գրաված մեր աշխատասեր ու տաղանդավոր ժողովուրոյն:

ՀՀԸ.Ծ. որն աննակազմակերպված քաղաքական կամ անհաջող դարցում էր իրեն ներարկել ինքնապաշտպանության խայտարդյան նորացում նրա գյուղավոր մոցակից էր ՀԱԲ-Ը, որը կարողացել էր հարաբերաբար կանոնավոր ու ազգական համակարգ ստեղծել եւ շատ էր գովազանվում լրատվական միջոցներուով: Սակայն ՀԱԲ-Ը իր դիլետանու «սպարապետների» հետ միասին, արտաքուստ գեղեցիկ բայց ներքուստ փուչ ընկույզ էր, որը ՀՀԸ շատ հեշտ կոտրեց: Սյուս կազմակեր-

պություններն էլ չին ցանկանում կորցնել իրենց ծեռած դիրքերը, նրանց առաջնորդները պայքարում էին որևէ իշխանության հասնել:

Համախմբման նպատակով իրավիվող ժողովները վերածվում էին ամրովանդակ, գոռոզամիտ ու պատվախնդրությամբ լիքավորված անարդյունավետ բանավեճերի: Իրենց կամայականությամբ գործող խմբավատերին այդպես էլ չհաջողվեց համաձայնության գալ պաշտպանության միահանական ու կառավարելի համակարգ ստեղծելու հաջողությունը: Խմբավատներից ոմանք նեղմիտ ու հանցավոր հատկանիշների տեղ երիտասարդներ էին եւ փորձում էին պղտոր ջրութ իրենց «Փայք» բրսալ: Կարծում եմ, որ երկու պաշտպանության համար ոչ մի արժեք չներկայացնող այդ պատահական «սպարապեսների» հայրենասիրական ցուցադրական դրսեւորումներն էլ էին բխում թերեւանտուրունից կամ անձնական շահերից: Դակառակ դեպքում նրանք անվերապահորնեն կիամախնմբվեին ու կենքարկեին իրենց ընտրած կենտրոնական հրամանատարությամբ:

Մի այնպիսի իրավիճակ էր ստեղծվել, երբ ազգի գիտակից որդիները՝ համարյա անզեն, երկրի սահմաններն էին պաշտպանում եւ օգնության հասնում Արցախի իրենց հայրենակիցներին. մինչդեռ ոմանք էլ պետական գույքի, տեխնիկայի, գենքի ու հանդերձանքի թալանով ու դրանց առեւտրով էին գրադաւած: Մերկանու չիններու համար թերեւ միայն մի երկու օրինակ այն ժամանակավա իմ անձնական փորձից: 1991թ. փետրվար ապրիլ ամիսներին «Օդակ» օպերացիայի նախօրյակին, երբ սպետական բանակի եւ ներքին գործերի ստորաբաժանումներն արդեն հայարափութ էին Աղրեւծանը, իսկ հայկական գյուղերի պարզունակ ինքնապաշտպանության ու խաղաղ բնակչության դեմ օգտագործվում էին ուղղաթիռներ եւ ամեն տեսակի գրահատեխնիկա, 77 Գևս պաշտպանության հանձնաժողովի նախազահ կազմի Սարգսյանը ին առաջարկությամբ, ինձ հանձնարարեց հայտնաբերել եւ վերադարձն դոսաֆից հափշտակած գրահամերեները: Մենք նտադիր էին որանց վրա տեղադրել ենուն բացակայող գննացիրներ եւ այդ գրահամերենաներով զինել հատուկ գնոյի գոնք մի երկու ստորաբաժանում: Դրա համար նա ինձ տրամադրեց հատուկ գնոյի Զիվան Աբրահամյամի 1-ին եւ Սուրեն Կարապետյանի հետախուզական պաշտեր:

Արովյան քաղաքից հյուսիս-արեւելք գտնվող գյուղերի տարածքութ հայտնաբերել էրկու ԱՏԼԲ կոչվող գրահամերենա, որոնք գտնվում էին սիլոսի հորերում ու ծյան հասա շերտուի տակ: Երբ ին տղաները սկսել էին մերժնաներն ազատել ծյան շերտից, մեզ շրջապատեցին մոտ 15 ավտոմատակորներ: Զիվանին մի քանի զինվորների հետ անմիջապես ուղարկեցի Արովյանի միլիցիայի բաժնից օգնություն խնդրելու, իսկ ինը անցա բանակցությունների: Այդ գինված տղաներին բացատրում էի, որ Կազմեն Սարգսյանի հրամանով մերժնաները տանում ենք վերանորոգելու եւ նարսերում օգտագործելու համար, սակայն այս չէր ազդում նրանց վրա: Միայն Արովյանի միլպետի տեղակալի հետ տաս հոգուց բաղկացած օպերատիվ խմբի եւ Զիվանի հետ գտնվող մեր մարտիկների հայտնվելու ստիպեց այդ տղաներին ցովել: Այդ հրասակախմբի թուկ խմբավետը ամեն մի մերժնայի համար պահանջում էր 20 հազար ուրբիչ:

Բազմաթիվ նման դեպքերից հիշատակման է արժանի նաեւ երեւանի կենտրոնում տեղի ունեցած հետեւյալ դեպքը: Նմ հետախուզները տեղեկացրին, որ այրադաց կոմբինատում տանկ է քաքցած, որի «մերերը» ուզում են այն վաճառել: Սարտ ամսի վերջին ին խումքը ժամանեց կոմբինատ: Պահակային ժառայության պետք տանկի նաև ոչինչ չգիտեր կամ չկամեցավ ոչինչ հայտնել: Ես հեռախոսով կապվեցի իր տանը գտնվող ծենոնարկության տնօրենի հետ եւ խնդրեցի գալ կոմբի-

նատ: Այդ ընթացքում մուտքի դարպասի մուտ հավաքվեց ագրեսիվորեն տրամադրված երիտասարդների մի խումք: Տղամերը պատճեց էին կազմել եւ թույլ չին տալիս, որպեսզի մեր քարչիչ մերժնան անցնի: Կոմբինատ ժամանած տնօրենը նույնական էր ոչինչ չկարողացավ ինձ ասել տանկի մասին: Ես նրան ցույց տվեցի Վազգեն Սարգսյանից ստացած նախատը եւ պահանջեցի թույլ տալ զննել կոմբինատի տարածքը: Ալրաղացի գլխավոր շինությունից ոչ հեռու հայտնաբերեցինք փայտն վահանակած գրահամերենամ, որը ոչ թե տանկ էր, այլ դոսաֆից առեւնազված ԱՏԼԲ: Նոր էինք «Ուրալը» մոտեցրել մերժնան բուքսիրի վերցնելու, երբ հայտնվեցին երեք մեծահասակ տղաներ, իսկ նրանց ետեւից երիտասարդների սրիկայախումբը: Նրանք նորից փակեցին մեր դուրս գալու ճանապարհը, իսկ խանի մեծահասակ պարագլուխը հայտարարեց, որ թույլ չի տա տանել իր սեփականությունը, եթե նրան չվճարենք ոչ պահանջման համար ուրբիչ, որն ինքը իր վճարել է ոուս գինվորականներին: Այդ տականքի լկտիությունն ի վերջ ինձ հանեց համբերությունից: Վերոբեցի ին մարտիկներից մեկի ավտոմատը, լիքավորեցն, ուղղեցի սրիկայաների պարագլուխների վրա եւ խոստացա անմիջապես զնողակաների այդ «բիզնեսմեններին», եթե չի ետանան ու ճանապարհը չքացնեն: Երեք սրիկաները չի անմարդակեցին հանել թիկնոցների տակ քողարկված զենքերը եւ ծկնեցին ալրադաց գլխավոր շենքը, իսկ երիտասարդների սրիկայախումբը փախտուսի դիմեց: Մերժնան բարեհաջող դոսաֆի տեխնիկական լայրոց հասցրեցինք, որուն արդեն հավաքել էինք տարրեր միիդ տաս զրահամերենան եւ հատուկ գնոյի Զիվանի ու Սուրենի վաշտերի տղաների ուժերով կերանորոգութ էինք շարքի դուրս բերվածները:

Իհարկե, այն ժամանակ մեր համրապետությունում տիրող քառասային իրավիճակն ուներ ոչ միայն սուբյեկտիվ պատճառներ, այլև բխում էր օբյեկտիվորեն առաջացած հանգամանքներից, որոնք աստիճանաբար հաղթահարվում էին պետական կառավարման եւ պաշտպանության կազմակերպման փորձ չլունեցող նոր վարչակազմի. Գերագույն խորհրդի պաշտպանության հանձնաժողովի եւ նրա աշխատանքներին օժանդակող կազմակերպությունների ու առանձին անհատների ջանքերով: Սակայն պետք է խոստովանել, որ «բարեհիշտամեների» հետեւանքով ճագած քառասային իրավիճակը շատ բանկ նստեց մեր ժողովրդի վրա եւ ողբերգական դարձավ Աղրեւծանում բնակվող մեր նու կես միջին հայրենակիցների ճակատագրի համար:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆՔ ԱՆԴՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՊԱՍԽՈՒԹՅԱՆ

1989թ. սկզբին ես փորձեցի պահեստային սպաներից օպերատիվ խումբ ստեղծել եւ գրադիւ ինքնապաշտպանության կազմակերպման գործնական հարցերով՝ մեր սահմանամերծ շրջաններում, բայց դա ինձ չհաջողվեց: Զինվորականների հավատարմության երդում էին տվել սովորական իշխանությանը, սովոր էին միայն պետքի հրամաններ կատարելուն, չեն ցանկանում նախաձեռնություն ցուցաբերել եւ ինքնուրույն որոշումներ կայացնել: Բացի այդ, նրանք չեն պատկերացնում, որ ԽՍՀՄ-ը երբեք կարող է կործանվել եւ սպասողական դիրք էին գրավել:

Սպասեն ասում են, լավ որսորդին որսը ինքն է գտնում: Կոնդ թաղամասի տոյաները, որոնք լսել էին իմ նպատակների մասին, ապրիլի սկզբին ներկայացան ինձ եւ առաջարկեցին, որ իրենցից ջոկատ կազմեմ, ուղղմական պատրաստություն տամ եւ իրենց օգնությամբ իրականացնեն իմ մարտական ծրագրերը: Տղաները պատրաստական էին անվերապահորեն կատարել իմ բոլոր պահանջները եւ ենթարկելի գինվորական կարգապահության կամոններին: Կոնդեցից ջոկատի ավագ ընտեղենի Վաչագան Չիքուչյանին, որն իր համար ու եռանդուն բնակության համապատասխան կրուն էր «Չուզուն Վաշո» մականունը: «Կոնդ» ջոկատը դարձավ իմ հավաստարին «անծնական ստորագրածանություն»:

Դունիսի կեսին Վաչագանն ինձ հայտնեց, որ մի կազմակերպությունից ժամանակավորապես վերցրել է երկու ԳԱԶ-69 եւ մեկ բեռնատար մեքենա, որոնք կարող են ապահովել մեր մարտարշավները: Ջոկատի մարտական պատրաստությունն ավարտված էր, եւ մենք դուրս եկանք սահմանամերծ շրջաններ: Անցանք և այսինքն ի ամբողջ սահմանագծով, հետախուզեցներ եւ քարտեզների վրա նշեցինք ազերիների հենակետերն ու ներքին գործերի պահակակետերը. շփման մեջ նտանք սահմանապահ ծառայություն կատարող տարրեր կազմակերպությունների եւ տեղական ինքնապաշտպանության ջոկատների հետ: Այդ աշխատանքներին գուգընթաց զբաղվում էինք սահմանամերծ գյուղերի ինքնապաշտպանության կազմակերպման ջոկատների մարտական պատրաստության գործով:

Քանի որ «Կոնդ» ջոկատն իմ առաջին միավորումն էր եւ ամենուրեք ուղեկցում էր ինձ եւ ապահովում կատարվող աշխատանքների ընթացքը, անհրաժեշտ եմ համարում անվանել այդ ջոկատի առաջին մարտիկներին.

Վաչագան Չիքուչյան
Ռուբեն Ալեքսանյան
Կարեն Թարխանյան
Արմեն Մարկոսյան
Գրիգոր Ղարությունյան

Հրանտ Միհիտոսյան
Սարգիս Դրոշակիրյան
Մնացական Ալեքսանյան
Լեւոն Մանուկյան
Գեւորգ Եղիազարյան

Անդրանիկ Ծահվերդյան
Յովհաննես Յովհաննիսյան
Լեւոն Սարիբեկյան
Սեյրան Սաֆարյան
Մրայիկ Ենոքյան
Կարեն Ալպարյան
Նեկոլաս Յովսեփյան

Վանիկ Ղարությունյան
Յայկ Ալօքենյան
Յայկ Ալեքսանյան
Արտաշես Չորանյան
Գագիկ Խախանյան
Սեմիկ Ալեքսանյան

Մենք սերտ կապերի մեջ էին Կայքի, Սիմիանի, Գորիսի, Կապանի շրջանների երկրապահ եւ այդ շրջաններում տեղակայված «կուտակցական» ջոկատների հրանատարանների եւ մարտիկների հետ: Այն ժամանակ ամեն մի կազմակերպություն մերն էր որոշում իր զինուժի մասնակցության տեղը, ժամանակակից եւ ծնությանը մեր կազմակերպությունների անդամների համար նրանց միջին մղղող պայքարն արտացոլվում էր «կուտակցական» ջոկատների փոխհարաբերություններում եւ մասնատվածության հիմնական պատճեններից մեկն էր: 1989թ. առանձ Եղիզնածորի եւ Վայքի շրջաններում տեղակայված էին ՀՀՀ-ի, ՀԱԲ-ի, ԱԻՍ-ի, ՀՅԴ-ի ենթակայության տակ գործող 20-25 հոգանու սպակավագրը ջոկատներ, որոնք միմյանց հետ համարյա թե չին չփկում: Խաչիկ գյուղի տներից մեկում տեղակայված ու որսորդական իրացաններով գինված երիտասարդ ուսանողների եւ նրանց տարեց հրամանատարի հետ խոսկցությունից կարելի էր միայն կռահել, որ նրանց դաշնակցականներ են: Խնձորությունից մոտակայքում տեղակայված էին ՀԱԲ ի և ՀՅԴ ի ջոկատները, որոնք միջյանց հետ չին համագործակցում: Այդ երկու ջոկատներում էլ, բացի մի քանի ՏՕԶ տիպի ու որսորդական իրացաններից, ուրիշ գեներալների մասին գյուղում գտնվող ԱԻՍ-ի ջոկատն ուներ ավտոմատներ, չկար: Սիյան Բարձրունի գյուղում գտնվող ԱԻՍ-ի ջոկատն ուներ պատումատներ, որ սահմանամերծ շրջաններում:

Սեպտեմբերի սկզբին Վերադարձանք Երեան՝ տղաներին մի փոքր հանգիստ տալու եւ մեր հետագա գործողությունները ծրագրելու: Ծրջաններում մեր ծավալած գործունեության մասին բարի ուրեր էին տարածվել մարտարագրում, եւ հենց որ հայտնվեցի իմ աշխատավայրում Երեանի քիմիական տեխնիկումունը, միաժամանակ ինձ դիմեցին ֆիդայական շահման մի շարք կազմակերպիչներ: Լենինի Ազգայինանը, Աղոստ Արշակյանը եւ ուրիշներ: Նրանց խնդրում էին, որ ես անձամբ իրենց կազմակերպած ջոկատների անձնակազմին նարտական պատրաստություն տամ, որից ես չի կարող հրաժարվել: Կազմեցի 3 ամսվա համար նախատեսված ուսումնական ծրագիր, պարապմունքների գրաֆիկ եւ 1989թ. սեպտեմբերի 5-ից անցա տարրեր կազմակերպությունների 30-50 հոգուց բաղկացած ջոկատների մարտական պատրաստությանը: Պարապմունքները սկսվում էին առավոտյան ժամը 8-ին եւ ավարտվում կեսիշերին:

Երեանի քիմիական տեխնիկումի ուղղմագիտության ու սպորտի ուսումնական բազան լավագույններից էր հանրապետությունում: Բացի հարմարավետ ու գերազանց կահավորված ուղղմագիտության կարիքներից, ուներ հրածանական գեղագույն աշխատավայր աշխատանքների ընթացքը, ատրճանական ինքնապահ էլեկտրոնային լազերային եւ պնինմատիկ հրացաններ, ատրճանական 5-ուսումնական ինքնապահ ՏՕԶ տիպի հրացանների համար 70 հազար ժամունքում միջոցներ: Այդ փուլու, եւ մարտական պատրաստության անհրաժեշտ այլ միջոցներ: Այդ

հարուսատ ուսումնական քազան են օգտագործում էի ջոկատների նախապատարատման համար. իսկ տեխնիկումի սովորողների հետ դասերը ժամանակափրացին դադարեցրել էի նախապես համաձայնության գալով տեխնիկումի տնօրեն. Արամին հաշատուրի Դուշչյանի հետ:

Նոյեմբերի վերջին երօրյա դաշտային զրավարություններ անցկացրի բոլոր ջոկատների մոտ 400 մարտիկների հետ Արովյանի շրջանի Զար գյուղի մոտ գտնվուի իմ նախակի հրեթոային բազայի տարածքում Գեղամա լեռնաշղթայի լանջերին. Կատարելագործվեցին ջոկերի եւ դասակների գործողությունները հարձակական եւ պաշտպանողական մարտերում, ուստիմնասիրվեցին խրամատավորման, քողարկման, ականապատման եւ զանազան այլ մարտավարական հարցերը փորձարկվեցին ինքնաշեն գեներերի մի քանի տեսակներու. Այդ ինքնաշեն գեներերը հաճախ դժբախտ պատճառ էին դառնում, եւ մեր մարտիկները վախենում էին դժբախտ գործածել, իսկ ես ընդհանրապես դժբախտ գեներ չեմ չել համարում. սակայն, մարտական գեների բացակայության պայմաններում, անհրաժեշտ էի համարում մեր պահակակետերում ունենալ գոնես ծեռքի ինքնաշեն նոնակներ: Նոնակների գործադրման հետ կապված պատահարները տեղի էին ունենում երկու հիմնական պատճառով՝ մի դեպքում կարծ էին կորում պայթուցիչ քուղը, իսկ մյուս դեպքում՝ նետողը ծիշտ չել կարողանում հաշվարկել եւ քուղը այդելուց հետո հապաղում էր: Տղաների անվտահությունը վերացնելու համար՝ նորից բացարեցի ինքնաշեն նոնակների նախապատրաստման եւ գործադրման կարգը. անձանք մի քանի նոնակ նետեցի տարբեր դիրքերից. որից հետո տղաները համարձակացան: Օգտագործեցին 50-ից ավելի տարբեր կառուցվածքի նոնակներ, որոնցից առավել արդյունավետ դուրս եկան 500 եւ 700 գրամամաս սպորտային հմ պատրաստա նոնակները. որոնք ամբողջովին բաժնակում էին մամր բներների եւ խոցում 20-50 մետրի վրա տեղադրված թիրախները: Վեց այսպիսի նոնակներ ես անձանք օգտագործել եմ աղբեջանական թյարմաքարայի գյուղը գրոհելիս:

Այսպիսով, Երեւանի քիմիական տեխնիկումի ռազմագիտության եւ սպորտի ուսումնական քազայի վրա նիսան 1989թ. 2-րդ նեսին մարտական պատրաստություն ստացան 8 երկրապահ ջոկատներ:

Դրանք էին՝

- «Կոնդ» ջոկատը, որի ավագն էր Վաչագան Չիրուխյանը,
- ՀՀԸ-ի Սղասի Արշակյանի կազմակերպած ջոկատը, որի հրամանատարներն էին ազգային հերոս Զիվան Աբրահամյանը եւ Սուրեն Կարապետյանը,
- ՄԻՍ-ի Աշոտ Նավասարդյանի կազմակերպած ջոկատը,
- Լեռնիդ Ազգալյանի ջոկատը,
- «Մուսա Լեռ» ջոկատը՝ նույնանուն ավանից,
- Վայքի շրջանի Բարձրության գյուղի ինքնապաշտպանության ջոկատը,
- Շայարդնախազիծ ինստիտուտի ջոկատը, որի ավագն էր Վլադիմիր Գրիգորյանը: Բացի այդ, միամսյա ծրագրով հրամանատարական պատրաստություն ստացավ ՀՀԸ-ի Երեւան քաղաքի շրջանային շտաբների անդամների 30 հոգուց բաղկացած խումբը, որի ավագն էր Կողոյքա Շովիաննիսյանը:

Ավելորդ չեր լինի նշել, որ Զիվան Աբրահամյանի, Սուրեն Կարապետյանի, Վաչագան Չիրուխյանի եւ մյուս իմ պատրաստած ջոկատների, մարտիկները կազմեցին 1990թ. ստեղծված հատուկ գնդի անձնակազմի ու հրամկազմի հիմնակորիզը, գնդի. որը դարձավ Հայաստանի Հանրապետության առաջին կանոնավոր զրամաժավորումը եւ մեծ դեր խաղաց դեռևս անկանոն վարվող պատերազմում:

1990թ. հունվար մինչեւ վամիսներին «Կոնդ» ջոկատի հետ նորից գտնվում էի նախիջեւանի սահմանամերձ շրջաններում, զրավում էի ինքնաշտապանության ուժերի ռազմական հրամատական պատրաստությամբ: Նույնիսկ տեխնիկումի շարժական կինոպարատուրան էին զերծ վերը անումբներում ռազմահայրենայի բական ու ռազմական միավորությունը:

Այն ժամանակ ես համարում էի, որ Արցախի ժողովուի դեմ բռնությունների եւ տեղահանման փորձերի դեպքում, մենք պետք է թիրախ գարծնենք բռն Աղրբեջանից կտրված Նախիջենանը, մարտական գործողություններ ծավալենք նրա տարածքում՝ հաշվի առնելով ներքին զորքերի ներկայությունը սահմանի երկու կողմերում: Ենց այդ կապակցությամբ ուսումնասիրում էի մեր հավանական հարվածների ուղղությունների ու մոտ ապագայում սահմանամերձ գոտիներում համապատասխան զինուժի նւ հրետանային ստորաբաժանումների ստեղծման հնարավորությունները:

Այս բոլորը կարող է մի քիչ ֆանտաստիկ թվական բայց, ինչ արած, այն ժամանակ մենք իրոք կլանված էինք նման մտահղացումներով եւ գործում էինք այդ ուղղությամբ:

ԲԱՐՁՐՈՒՄՈՒ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅՈՒՆԸ, ԴԱՆՈՒՊՈՒՄ «ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ» ԶՈՐԱՄԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՐՃ ՀԱԿԱՐՎԱԾԸ ՀԱԿԱՌՎՈՐԴԻՆ

1990թ. փետրվարի 26-ն էր. մի քանի օր էր, որ կոնդեցիների հետ վերադրծել է-ինը Վայրի շրջանից, երբ կեսօնշերին ահազանգ ստացաւ Զերմուկում գտնվող ՀԱՐ ի ջոկատի դեկավար Աղասի Կարապետամից: Նա ինձ հաղորդեց, որ ուղարի-ոց մի քանի անգամ իրթիուակներու և Բարձրունի գյուղը, իսկ աղրթեցանական Ք-յարմաշաբախ գյուղի շրջակայրուն ազերիները խոչը ուժեր են կուտակում, խնդրեց ինձ շտապ գալ Բարձրունի եւ դեկավարել պաշտպանությունը:

Ես անմիջապես տագավառապ հայտարարեցի «Կոնդ» ցկատին. գիշերվա ժամը 3-ին մեկնեցինք Բարձրունի եւ առավոտյան ժամը 6-ին գյուղում էինք:

Գյուղի բնակչութերի մի մասս մեքենաներով լրում էր բնակավայրը: Առաջին հերթին Բարձրունուց դուրս նկող ճանապարհի վրա ին տղաներից պահակալիս նշանակեցի տղամարդկանց փախուստը կամնելու, այնուհետեւ՝ գյուղիորդիրի դեկավարներին առաջարկեցի բացատրական աշխատանք ծավալել բնակչության մեջ. մարդկանց հաղորդել, որ մենք երաշխափորում ենք նրանց անվտանգությունը: Ճնայած ես դրանուն դեռևս համոզված չի: Նրանք առաջարդանքը կատարեցին, իսկ ինքնապաշտպանության ակտիվիտետները պահակակետում փոխարինեցին իմ տղաներին եւ այլևս ոչ մի տղամարդու թույլ չին տախիս լրել գյուղը:

Սուտափորապես ժամը 8-ին Բարձրունիում հայտնվեցին ներքին գործերի գումարտակի հրամանատարն ու քաղաքական գծով նրա տեղակալը, որոնք հակառակ կորուս տեղի ունեցող ազերիների կուտակումների եւ ներքին գործերի պահակակետերի անհայտացման վերաբերյալ ոչ մի տեղեկություն մեզ չհայտնեցին: Այդ սպաններին ես հարցողի, թե ինչպես է գործելու նրանց պահակակետի լեյտենանուն իր գինվորներով եւ երկու ԲՄՊ-ով. եթե Նախիջևանի կողմից հարձակվեն նրանք մեզ օգնեն ւ են, թե՞ ոչ: Սպանները խուսափեցին պատասխանից եւ ասացին. որ վերադասից ոչ մի ցուցում չունեն: Ես նրանց նախազգուշացրեցի, որ ազերիների հարձակման դեպքում, պահակակետի անձնակազմին գինաթափելու են, եթե գինվորները չցանկանան մեզ աջակցել: Գումարտակի հրամանատարը խնդրեց, որ ննան քան չանեն, եւ խոստացավ իր հրամանատարությանը հաղորդել այն կողմի ներքին գործերի անհայտացման ու ազերիների կուտակումների նախին, որից հետո, նրա ասելով. կոնկրետ որոշում կը ընդունի: Այդ սպաններին մեր կողմը քաշելու համար՝ Վաչագան Չիրուչյանին հանձնարարեցի մի պարկ լցնել պահաժներով. երշիկներով, որու շշերով եւ այլ սննդամբերքով ու առաջարկել մթերի կարիք գագացող սպաններին: Նվերն ընդունվեց, իսկ թի անց, թեֆները «լավ», հրամանատարները մեկնեցին գյուղից: Լեյտենանուին նրանք ասել էին, որ հարձակման դեպքում ժամանակափորապես ինձ տան մի քանի պատումատ ու փանդիչտներ, իսկ մարտական մեքենաներն ու գինվորներին դուրս բերի գյուղից:

Լեյտենանուն ին հետախուզական խումբը ԲՄՊ-ով փորձեց բարձրացնել 2063 ամանուն բարձունքը մեր ծախ թեւում, բայց կես ճանապարհին մեքենան խրվեց խոր ծյան մեջ, եւ մենք շատ մեծ իժվարությամբ, մի կերպ, ոտքով հասանք այդ լեռան գագաթը. որի տակ է գտնվում աղրթեցանական Շաղա գյուղը: Գյուղի հյուսիսային ծայրամասում լավ սարքավորված դիրքում, որից ազ ու ծախ տեղադրված էին մետաղե թիթեղներից զորված վերգետնյա երկու գնդացրային կրակակնետեր, հերթապահում էին 15-20 մետր հարավ գտնվում էր ազերիների զրանոցը: Շատ սեւհագուստավորներ էին երեւում նաև գյուղի հրապարակներում ու փողոցներում: Սակայն այդ կողմից ազերիները դժվար են հարձակման անցնեին, քանի որ տարվա այդ եղանակին Բարձրունին հարավից պատասխարող լեռնաշղթամ օդրժնամանու ամենցամելի էր 1,5 մետրի հասնող ծյան շերտի ապատառով: Գյուղի ջոկատի ավագին հրամանացի հյուսակետում սարքավորա գետնատունը ու նրան կից խրանատը մաքրել եւ այնտեղ երեք հոգուց բաղկացած դիտորդների խումբ պահել, բացատրեցի դիտորդների խնդիրները, կապի կարգն ու ազդանշանները: Տղաները մնացին առաջարդանքը կատարելու, իսկ եւ՝ Վաչագանի ու լեյտենանուն հետ, վերադարձա գյուղը ու կոնդեցիների հետ անցան մեր պաշտպանության գինավոր ուղղության վրա գտնվող սարահարթը, որի հարավային եզրին դիրքավորվել էին Բարձրունու ինքնապաշտպանության ջոկատի տղաներն ու նրանց օգնության նկած Սերոս ու Սարտիրոս փոքրիկ գյուղերի մի քանի տղամարդիկ: Նրանց թվով 25-30 հոգի էին գինված որսորդական հրացաններով: Նրանց հետ էին նաև Ան-Ս-ի փոքրաթիվ ջոկատի, բայց մարտական գենը ու գինված տղաները: Յակառակ կողմի 1757,0 բարձունքի լանջերին սարքավորված երկու երկարածիք ու շարժական մակետներով կահավորված խրամատներից մեր տղաների վրա անընդհատ կրակում էին թշնամուն մոտ տաս նշանառուները: Այդ անընդհատ տեղացող կրակի տակ մեր տղաները չէին կարողանում գլուխները բարձրացնել քարերից հավանակ սարքավորված պատուապարներից: Ազերիների նշանառուները գինված էին լավագույն սնայպերական հրացաններով, գործում էին պրոֆեսիոնինիալ կերպով, իսկ մեր տղաներից երկուսի ծեղորդն գտնվող շատ հին ու մաշված փողերով հրացաններից արձակվոր գնդակները չէին հասնում հակառակորդի հրամատներին. նույնիսկ նշանոցի ամենաբարձր դիրքում:

Քյարմաչարակի բնակչությունն ամրողցովին էվակուացված էր: Գյուղուն գտնվում էին միայն սեւհագուստավոր ասկյարները, ճանապարհների խաչմերուկներում տեղակայված էին ավտոմատներով ու զնդացիներով գինված 10-15 հոգուց բաղկացած մարտական խնդիրը: Դա թշնամու առաջարկու գիծն էր: Գյուղից մեկ կիլոմետր հարավ-արեւելք հին քարտեզների վրա չնշված անասնապահական համալիրի ծածկերի տակ, անասունների փոխարեն, տեղավորվել էին թուրք գինվորները, որոնք ին խողովակածե հեռաղիտակում դիտվում էին որպես մի մարդկային զանգված: Դա ազերիների կենտրոնացման բնագիծն էր: Զահրիի կողմից անընդհատ 30 տղանոց ավտորուսներ էին մուտենում ֆերմայից հարավ երկու բարձունքների միջեւ գտնվող փոսորակին, մեքենաներից արագ վայր էին իշնում ասկյար-ներն ու, շղթա կազմած վագրով, արագ չքանու ինչ որ բնական թաքստոցներում: Դա է ազերիների թիթեղներային շրջան էր: Այդ տարածքում մշտապես տեղակայված են հայտնի ներքին գործերի ստորագրամանները թողել էին իրենց պահակները եւ անհայտացման վեցամյա 1990թ. փետրվարի 26-ին Բարձրամաշաբախ գյուղում արդեն կուտակված 500 գինվոր, եւ նրանց կուտակումը շարունակվում էր: Կասկած չկար, որ ոգետրված սովորական սահ-

մանի անհասադեպ ջախճախումից, ագերիները լուրջ հարծակման են նախապատրաստվում միգուց երեւան։ Չորիս մայրուղի դուրս գալու նպատակով։ Յանայրելով մի շաբթ տվյալներ՝ եկա այն եզրակացության, որ հակառակորդը հարծակումը սկսելու է փետրվարի 27-ի լույս 28-ի գիշերը կամ լուսաբացին։ Տերեւային գրոհի հավանականությունը թիւ էր, քանի որ գրոհողները պետք է շարժվեին զառիվեր ու ոժվար անզանելի տեղանքով։

Անհրաժեշտ էր շատապ միջոցներ ծեռնարկել թշնամու քրագրերը ձախողելու, իսկ դրա համար մենք ոչ ուժ ունեինք, ոչ է կենտրոնական հրամանատարությունը: Բարձրունի մեկնելուց առաջ Վաչագան Չիրովիսյանին հատուկ ուղարկել է ՀՀ-ի շտաբ մեր ստացած ահազանգի նախին տեղյակ պահելու և փամփուշտներ խնդիրները ըստ օրական բանական ժամեր ու օճանաւուն է ժին գույց տվել:

ԱԻՄ-ի ջոկատի հրամանատարին առաջարկեցի իր միակ զնդացիքը տեղադրել 1936.6 բարձունքի գագաթին եւ, անհրաժեշտության դեպքում, կրակի տակ պահել ջարմաշաբախից Բայձրունի տանող ծորաբերանը: Գյուղի դեկավարությանը հանձնարարեցի մեր ղիթերի թիկունքում գտնվող սարալանջերը դուքս բերել եղաներով, բահերով ու կացիններով զինված մարդկանց, իսկ ծայրահեղ դեպքում այդ գործիքներով կրպել: ՀՀԸ-ի Վայրի շրջանի շտաբից ժամանած երկու տղաներին խնդրեցի արագ ետ վերադառնալ եւ աշխատել Եղեգնածոյի հակակարգային հոնտանու բարափակ գոնե մեկ հրանոթ ու նարտապայացար մեզ հասցնել:

Երեխյան դիմումը էլ, եթե տորհանքականը եւան ու լուր բերեցին, որ զուղում հայտնվել է լավ գինված մի անհայտ ջոկատ: Գնացի զուղու այդ ջոկատին հանդիպելու: Պարզվեց, որ ոս «Մեծն Տիգրան» անկուսակցական զրամափառութեն էր, որը կազմագրուվել էր Միախանի շրջանի Սոֆիլու զուղում՝ 1990թ. փետրվարին: Նրա կազմակերպիչներն էին Խաչիկ Գևարյանը, Արմեն Վրձնեալյանը, Վաղիմիր Առաքելյանը, Կորյուն Գումշյանը, Սանվել Բաղդայանը եւ Լեւոն Սայսուրյանը: Զոկատի հրամանաւորն էր Կորյունը, որու օժիտեն ինչ ապահովութեազգական «Մեծն Տիգրանից»:

Այս գործամիավորման Բարձրությունը հայտնվելը մեզ հանար շատ օգտակետ պատճառականություն էր: Սովորուից Երեւան գնալին՝ Վայրում տղամերն իմանում են, որ Բարձրություն լարված դրույտն է, ճիշտ որոշում են ընդունում ու գալիս-միանում մեզ: Իմ բանակցությունները «Մեծ Տիգրանի» սազմինորդի անդամների հետ ամառտմած միտիւրեռնամբ, եւ օրկատն ինձ հետ դրւս եկամ առաջավոր դիր:

Չեմ կարող չիշխատակել ինձ մեծ հուզմունքը պատճառած մի եափոր՝ Փետրվարի 27-ին վաղ առավոտյան, զյուրում հայտնվեց մոտ 20 անձնական մեքենաներից բաղկացած շարասյուն։ Դա 70-80 հոգուց բաղկացած քյավառշիների ջոկատն էր, որը կազմակերպել ու Բարձրունի էր բերել երկու ոտքն է կոնքազդորային մասից կորված ջոկատի առաջնորդը՝ «Բզոն», որի հսկական անունը ջգիտնն ։ Դրանք 30-40 տարեկան ընտանիքատեր նարդիկ էին նի քանի որսորդական հրացաններով, իսկ մեծ նաև անզեն, ու քեֆները «լավ»։ Ես զգացի, որ այդ ազգանվեր, հայրենասեր ու անզեն նարդիկ կարող են ավելի շատ օլխացավանք պատճառել, քան օգտակար լինել. ուստի մոտեցած ԳԱԶ-69 մեքենայում նստած եւ այնտեղից իր տղաներին դեկավարող Բզոյին, ծանոթացա, մեծ գոհունակություն հայտնեցի նրա անհամապահ հայրենասիրության ու նախաձեռնության համար, բացատրեցի, որ անզեն նարդիկ պետք չեն, իսկ ես գենք չունեն նրանց համար, ինդրեցի ես Վերադառնալ, զյուրի հետ կապ պահպանել եւ լինել իմ ռեզերվում։ Քյավառշիները մի քիչ վիճաբանեցին, բայց հմերք իմ պահպանոց կատարեցին։

Ես արդեն որոշել եմ կանխիչ հարված հասցեի հակառակորդին և դրանուն տեսնուն մեր փրկությունը, ըստ դրա իրագործունք կապում է հրետանու հետ ու

սրտատրով սպասում էի իմ մտերին ԿԱ-19 հրամագրությունը: Ժամը 13.00-ին, հակակարկտային ծառայության մի քանի մարտիկների ուղեկցությամբ, մեր թիկունքային բնագծին մոտեցվեցին երկու հրանոր, որոնց վրա բացակայում էին մարտական վիճակի բերելու համար անհրաժեշտ վազաները, իսկ նշանառության միակ օպտիկական խողովակն անսարք էր: Դաշվի առնելով այդ ամենը, ինչպես նաև հակակարկտային «Էլքրուս» արկերի սահմանափակ քանակը, որոշեցինք առժամանակ օգտագործել հրանոթներից մենք:

Այսպիսով, փետրվարի 27-ին մեր ուժեղը կազմում է

«Մեծն Տիգրան» զորամիավորումը, 30 հոգի, պուրո՞ մասնակիամ տեսքերով.

ԱԻՍ.ի ջոկատը՝ 15 հոգի, բոլորը՝ մարտական գենութեղու

«Կոնդ» ջոկատը, 25 հոգի, SO2 եւ որսորդական հրազդաններու

ՀԱՅԻ ԾՈԿԱՄՊՐԵՆԴԻՍ ՁԵՐՄՈՒԿԻՑ, 28 հոգի, երեք ավտոմատով եւ որորորականնեռով.

Քարձրութիւն, Սերս, Մարտիրոս Գյուղերի ինքնապաշտպանության մարտիկները

Ե իոզի, ոչ մարտական գենքեր

Երկու հրանոք եւ նրանց համար՝ 40 ար

Սեր կենողանի ուժի ընդհանուր թվաքանակը կազմում էր ընդամենը 120-130 հոգի, որոնցից միայն 45-50 հոգին էին զինված մարտական գեներով և եղանակում էին մեր հավաքածու գորախմբի ակտիվ մասը: Երեսանին էր մեր միակ առավելությունը, չնայած, տեսել էի, որ ֆերմա են մուտք գործել երեք ծանր բեռնված ԿԱՄԱՉԵնք նրանց կցված ու բրեգենտով ծածկված կամ 122մմ-ոց ականանետներով կամ հասուրիցներով, որոնք մարտական դիրքերում դեռեւ չէին բացվել: Միգուցե դա պետք է առնելու նույն ոննենուր՝ ու հերո:

Հապալել չեմ կրթի, եւ ժամը 14.00-ին հրամոր դուքս բերեցինք նախապես ընտրած կրակակետ՝ առանց նարտական վիճակի բերելու, արագ հավասարակշռեցինք հենակետերի վրա՝ մինչեւ անհվանելը հողից կտրվելը: Նշանառությունը պետք է կատարեինք մոտավորապես, իսկ կրակը պետք է ճշտեինք ընդունելիությունը սանդակների միջոցով, այսինքն՝ ոչ ուղիղ նշանառության կանոններով: Անգրության հարվածեցինք Քյարմաջարախում գտնվող թշնամու առաջավոր ուժերին: Մեր անսպասելի հրետանային հարվածից խուճապահար եղած ասկյարները մի քանի րոպե անկանոն կրակ էին վարում մեր դիրքերի ուղրությամբ, բայց, եթե հայտնվեցին առաջին գոտիերն ու վիրավորները, փախան դեպի ֆերմա: Դրենց դիրքերը լրեցին ու ֆերմա հօն նաև հակառակորդի նշանառուները: Կրակով հետապնդելով փախչողներին պայթյուններն աստիճանաբար մոտեցրեցինք ֆերմային եւ մնացած արկերը արձակեցինք նրա վրա: Ֆերմայի երկարածիք փառ շինությամբ ուղրավիրտն դիպած երկու արկերից մեկը դետոնացիս առաջացրեց այնտեղ պահեստավորված արկերում եւ պայթուցիկ նյութերում, որից շինության տաճիքը օդ բարձրացավ կրակի, ծիս ու փոշու ամպերի հետ: Չա սաստիկ հանրավառություն առաջացրեց մոտակա սարայանքերը գրանցուած օրուատիմների մեջ:

Բոլոր արկերը կարպած էին, եւ սա սպաց դեպի մեջ դիրքերը, որպեսզի գրոհի տանեմ մեր ճարտիկներին և տաք հետքերով ամրապնդում հրետանու հաջողությունը: Դիրքերում իմ շուրջ հավաքեցի «Մեծ Տիգրանի» եւ մյուս ջոկատների հրամանատարներին, բացատրեցի, որ առանց հապահելու պետք է մտնենք Եյարմաչարիս, որից հետո միայն թշնամին կարող է հրաժարվել իր ազրեսիվ մտադրություններից: Եթե ես ճշտում էի ճարտական խնդիրը՝ օդում հայտնվեց ազերիների Մ-8 ուղղաթիռը, սրընթաց գնաց դեպի Ֆերմա եւ վայրէց կատարեց ծխող շինուալյան հակառակ կրղմում: Եթեուում էին դանդաղ պտտվող թիակները: Զգացվում էր, որ ազերիներն ուզուում են ինչ որ բան դուրս տանեն Ֆերմայից: Մենք հետո կիմանանք. որ

արկերի պայքաններից գոհվել ու վիրավորվել են շատ ազերիներ: Սպանվածների մեջ էր նաև Նախիջևանի իշխանության երկրորդ ղենջը: Այդ բարձրաստիճան պաշտոնատար անձին ներկայությունը գոներում ինքնին վկայում էր, որ ազերիները լուրջ հարձակման էին նախապատրաստվում նրա դեկավարությամբ: Ուղարիքը, որը դուրս էր բերում վիրավորներին, 20 րոպեից հետո ող բարձրացավ եւ թռավ Նախիջևանի ուղղությամբ:

Ես նորից էի հայտնվել դժվարին կացության մեջ: Իս հավաքածն զրախմբի տղաների մեծ նասօ ռիսկ չէր անուն գրուել Քյարմաշաբախը: Մեր ազատամարտիկները բացի հեռակար փոխիրազգությունից, ոչ մի ակտիվ նարտական գործողության նաևնակից չէին եղել եւ նարտական փորձ չունեին: Բացի այդ, նրանք տեսնում էին, որ հակառակորդը քանակով գերազանցում էր մեզ՝ առնվազը հինգ անգամ, իսկ ասկյարները գինված էին բացարձակապես նարտական զենքերով: Ես չէի կարող նրանց ստիպել եւ մոտ մեկ ժամ համոզում էի, որ հակառակորդը խիստ շփոթության մեջ է եւ չի կարելի թույլ տալ, որ նա ուշքի գա, որ միայն ներ վճռական հարձակումը Քյարմաշաբախի վրա, թեկուզեւ փորձ ուժերով, ավելի մեծ խունակ է առաջացնելու թշնամու շարքերում, որ մեր հանդգնությունը պետք է դիտվի որպես վերին աստիճանի հաշվենկատություն, եւ նույնիսկ գգուշություն...

«Գուրեմանատոր» ՍամՎելը, «Գդյան» Հարությունը եւ նականուն չունեցող նոնածիզ Սերոբը առաջիններն էին, որ համաձայնՎեցին գրողի գնաւ։ Անսպասելիորեն ինձ օգնության եկան «Մեծն Տիգրան» ջոկատից երկու աղջիկներ՝ անճգեգուրցի Կարինեն եւ եւս մի աղջիկ։ Նրանք սկսեցին նախատել տատանվող տղաներին, իսկ ինձնից պահանջում էին, որ իրենց էլ տանեն գրողի։ Արդեն մի մեծ խումբ էր ինձնից ծախուած ու աջ հավաքվել պատրաստ ին ետեւից գալու։ Յապաղել չեր կարծի, եւ ես որոշեղի գրեթել ինչպես պոլիտրոպկ կլոշկով։ Ոլտից վեր բարձրացրեցի ՏՏ ախտոյնոր ու «առաջ, իմ ետեւից» գոչելով գրողի տարա մարտիկներին։ Ազգեւու շարժվող իմ սպիտակահեր գլուխը պետք է ուղեցույց դառնար անվճռական ու տատանվող տղաների համար։ Այդպես էլ եղավ։ Երբ մի պահ ետ նայեցի, տեսա, որ շատերն են գրողի անցել։

Քյանաբշարակ մնտելուց առաջ տղաներին քածանեցի երկու խճի՝ մեկն ուղարկեցի զյուղի ձախ ծայրամասով. իսկ երկրորդ խճի հետ գրուեցի զյուղի կենտրոնը: Արդեն օգտագործել էի իմ վեց ինքնաշեն նոնակները եւ վեցրու Կայինսի ավտոմատը: Աղջիկները շարժվում էին մեծ հետու՝ փանջու շտներով լցված պարկերով մեջքներին, լիցքավորում էին ու մեծ փոխանցում պահունակները: «Մեծն Տիգրանը» փանջու շտների բավականացափ պաշար ուներ, եւ մենք ընթացքից ու կարծատեւ կանգաներից փորորկալից կրակ էինք տեղում տներում եւ այլ շինություններում պատսպարված աւելյարների մնացորդների վրա: Չոգերանական ճնշում գործադրելու եւ զյուղը լուսավորելու նպատակով՝ կարգադրել էի հրկիզել տների նույ դիգված խոտը, բայց տղաները չբավարարվեցին դրանով եւ սկսեցին հրկիզել տները եւ օճանակ շինությունները:

Գյուղի կենտրոնական երկու հարկանի մեծ տան մոտ, որը սկսել էր հրկիզել «Գուբերնատոր» Սամվելը, 30-40 քայլի վրա տեսա տների արանքով կրացած փախչող 4-5 ասկյարների, փորձեցի վերացնել նրանց, քայլ ավտոմատ խափանվեց: Խռնակածից Մերորին ծեռօդով ցուց տվեցի ազգերիների տեղը ու բդավանցի Մերոր, խիի, սակայն Մերորի ինքնաշեն նռնակածիցը նույնաես խափանվեց: Եթե ասկյարները խունաաի մեջ չլինեին, երկուսիս է մոտիկից հաճգիտ կզմդակահարեին: Դա ինձ վատ կանխամշան թվաց եւ սառեցրեց նարտից մի քիչ տաքացած գիտակցություն:

Սեր հետագա առաջնադաշտումը դառնում է Վտանգավոր: Գիշերային պայմաններում իմ մարտիկները կարող են միջյանց խփել, որովհետեւ նանք խմբերով թրվել ու հրապուրվել են հրկիզումով, իսկ կապի միջոցների խայաց բացակայութունը բույշ չեր տալիս ինձ վերահսկել հրադրությունը, առավել եւս բաց դաշտով մոլոնալ մեկ կիլոմետրի վրա գտնվող Ֆերմային, որտեղ կուտակվել են 100-ավոր սակյարներ: Ինձ հետ գտնվող տղաների միջոցով հրանայեցի, որ վերջ տան հրկիզումներին, միջյանց հետ ծայնային կապ հաստատեն եւ կանոնավոր կերպով նաշանցեն դեպի Բարձրունի տանող ձորաբերանը: Մինչեւ տղաները կատարում են իմ հրամանը՝ Դարություն «Գոյլանք» վերացրեց իմ ավտոմատի խափանումը: Պարզվեց, որ գնդակն անջատվել էր պարկումից ու մնացել փողի մեջ: Երեւի պարզունի լիցքը խոնավ էր եղել ու չեր բօնկվել:

Իմ խունքը վերջինն էր դուրս զայխ Քյարնաշաբախից: Երբ մենք մոտեցանք ձուի բկանցքին՝ հրամանատարներն ինձ գելուցցեցին, որ բոլորը բարեհաջող դուրս են եկել գյուղից: Բարձրունու կես ճանապարհին նեզ դիմավորեց Վաշագան Շիռուչյանը եւ տարավ գյուղ՝ տոնական ընթրիք: Ընթրիքից հետո վերադարձանք մեր դիրքեր, տեսանք, որ կրակն ավելի է բորբռվել եւ ամբողջ Քյարնաշաբախը ողբերի մեջ է, իսկ թշնամին մեր նահանջից հետո էլ ոիսկ չի անում գյուղ մտնել: Կտիհացած ագերմները իրադարձությունների ննան ընթացիք չին սպասում եւ դրան պատրաստ չին, իսկ դեկավարությունից գրկվելուց հետո՝ ընդհանրապես պարավածահար էին եղել:

Հարձակմանը չմասնակցած տղաներից երեք պահպանական խումբ կազմեցի եւ սոսաց քաշեցի մեր սահմանագիծը. կարգավորեցի հերթապահությունը դիրքերում, ուսկ մարտի մասնակիցներին ռուլ տվեցի քննել մինչև առավոտ: Ինչու գնացի գուղ, ավագարեցի հրամանատարներին ու գյուղխորհրդի անդամներին. ճշտեցի մեր հետագա խնդիրները, երկու հրետանավորներին ուղարկեցի իրենց բազան՝ հրանոթական պահպանական գործիքներ ու արկեր բերելու: Բոլոր տղաները երկու օրվա ընթացքու մտերմացել էին ինձ հետ եւ կարգապահ գինվորների նման կառարում էին իմ կարգադրությունները: Գիշերը հրետանավորները վերադարձան իրենց հետ բերելով այս ամենը, ինչ որ համեմարարված էր: Նրանց հետ մեծ օգնության էին եկել նաև մի քանի հրետանավորներ: Գյուղխորհրդի երկու տրավատոր լերցորեցի, հրանոթները տեղադրեցի փակ դիրքերում: Սարտական վիճակ ընդունեցի հետո հրետանավորների հետ պարապմունք անցկացրի, հրամանատարների առաջարկը նշանաբար կազմեցի եւ լուսաբացին վերադարձան մեր հետեւակի դիրքերը ու սկսեցի ուսումնասիրեց ստեղծված հրանոթությունը:

Փետրվարի 28-ին կեսօրից հետո, սեւագուստավորները սկսեցին զգուշորեն տունել Քյարնաշաբախ. իսկ իրենց նախկին պահականետներում համկարծ հայտնվեցին նորոք զրդերի զինվորներն ու նարտական տեխնիկան: Դաշտող օրը բազմահիվ ավտորւսներով զյուղ էին վերադառնում տեղահանված բնիսկչիները: Ինտենսիվ շարժումը Զարիի ու Բաղամլի տանող ծանապարհով շարունակվում էր ամսող օրը: Սեբենաները զյուղ էին բերում բնակչիներին և ետ տանում Արդեզանի նողակատի ասկյարներին: Պարզ էր, որ, լավ դաս ստանալուց հետո, ազերիները բարձարագիւղ էին իրենց ազդեսի մտադրություններից: Քյարնաշաբախի ֆերմայում շահնավոր պետական գործիք եւ մյուս նահատակվածներին նվիրված սգո արարությունների ռեարդուսներ կազմությունների հաջորդում նախիցնեանի հեռուստատեսությամբ, որի հաղորդումները ընունվում էին բաղադրություն:

Սարսի 2-ին մեր դիրքերում հայտնվեց Վալեյի շրջանի ՊԱԿի բաժնի պետ Վալեյի հայտնովի, Զերենդիշենկոն, որի հետ ես նախկինում մի քանի անգամ հանդիպե

էի իս մարտարշավների ժամանակ: Պարզ ասած. նա հետեւում էր իմ գործողություններին: Եթե 1989թ. օգոստոսին ես այցեցել էի Խնձորուտ և Գյուլհատան գյուղերում տեղակայված մեր երկրապահ ջոկատներին և տղաների հետ հետախուզում էի Աշարի Բուլղոր գյուղի նոր գտնվող ազերիների ու ներքին գործերի հենակետնոր, Վայերի Խվանովիչը նույնպես հայտնվեց այնտեղ. ծանոթացանք եւ նույնիսկ շրջագայեցինք միասին: Ընդ որում. նա ոչ մի հակատրամադրվածություն չէր ցուցաբերում, հակառակ՝ ընթանունով էր մոտենում մեր արորելմներին: Այս անգամ Չերենիչներին նկատելի հուզված էր: Նա հայտնեց ինձ, որ ֆերմայում եւ մեր գործի ժամանակ շատ ազերիներ են գոհվել, որոնց թվում է Նախիջեւանի հՇ.ում մեծ հերինակություն վայելող պետական գլխավոր գործիչներից մեկը, որի նահատական կապակցությամբ ազգային սուրբ է հայտարարված, իսկ գործը, ինչպես ասում են, հասել է «դիվան բաշուն»: Մութալիքովը դիմել էր Գորրաչովին Քյարմաշաբախում տեղի ունեցածի վերաբերյալ, հայերին ներկայացրել էր որպես ագրեսորների, պահանջել էր միջոցներ ծեռնարկել նրանց հանդեպ: Այնուհետեւ նա ասաց, որ Մոսկվայից մարդիկ են գալիս այդ հարցով, եւ ինքը գնում է Երեւան՝ նրանց դիմավորելու և Բարձրունի թերելու: Խնդրեց, որ տեղի ունեցածի վերաբերյալ բացատրություն նախապատրաստեմ, քանի որ ես եմ եղել մարտերի գեկավարը: Ես նրան համբաւացրի: ասելով, որ պատրաստ եմ պատասխան տալու ոչ միայն նրա կազմակերպության ներկայացցուցիչներին, այլ հենց «պերեստրոյկայի» գլխավոր ճարտարապետին, եթե նա բարեհաջ ինձ հետ գրուցեն:

Մուտավորապես ժամը 17.00-ին մեր դիմությունը մոտեցավ «Վոլգա» մեքենան, որից դուրս եկան փոխգույքը Չերենիչներուն և երկու մոսկվացիներ: Ես այդ ժամանակ հետեւում էի ազերիների կողմում շարունակվող եռուգենում: Ֆերմայում դեռ շատ ամվարներ կային, եւ հենց այդ ժամանակ նրանց ավտորությունը կին նստեցնում: Յուրերը մոտեցան ինձ, ու ներկայացան ինձ նրանց հրավիրեցի եռուտանու վրա տեղադրված իմ հեռադիտակի մոտ: Երկու մետրանոց հաղթանակ գեներալը՝ Ֆերման ու Քյարմաշաբախը մի քանի րոպե գննելուց հետո խնդրեց պատմել տեղի ունեցածի մասին եւ բացատրել, թե ինչո՞ւ ենք հրկիցել ազերիների գյուղը եւ ապացույցներ ներկայացնել ազերիների ագրեսիվ գործողությունների կամ դրանց նախապատրաստման վերաբերյալ: Ես զարմանք հայտնեցի ննան հարցադրման համար եւ ասացի, որ առնվազն տարօդինակ է, եթե ՊԱԿ-ի բարձրաստիճան սպաները ինձից են ուզում տեղեկություններ ստանալ ազերիների ագրեսիվ գործողությունների մասին այն պարագաներում, եթե նրանց ջախջախել ու հիմնահատակ են արել ՊԱԿ-ի պատասխանատվությամ տակ գտնվող սովորակիրանական սահմանը, ոչնչացրել են բոլոր սահմանային ուղեկալներն ու կառույցները: Այնուհետեւ՝ նս մանրամասն նկարագրեցի տեղի ունեցածը: Դրամեջտ տալուց հսկա գեներալը սովորականց ամուր ու երկար սեղմեց իմ ծեռքը: Առանց մեկնարանումների պարզ էր, որ նա խրախուսում եւ լուր համաձայնություն է արտահայտում մեր գործողություններին:

Դաջորդ երկու օրը՝ մարտի 3-ին ու 4-ին, կենտրոնական հեռուստատեսությամբ՝ «Վրեմյա» ծրագրով, ցույց տվեցին Քյարմաշաբախը, ազերիների լացն ու կոծը, այրված տները եւ այլն, սակայն Մոսկվան այդ գործերին ոչ մի ընթացք չտվեց, մեզ նույնիսկ դիտողություն չարեցին: Երեւի ՊԱԿ-ի գեկուցումը գենսեկին հակահայկական չէր եղել:

Այսպիսով, Վայրի շրջանի Բարձրունի գյուղի տակ, 1990թ. փետրվարի վերջին տեղի ունեցած ճակատամարտն ավարտվեց մեր լիակատար հաղթանակով: Ազերիները, այդ մարտում կրեցին շատ ծանր կորուստներ եւ ստիպված էին հրաժար-

վել իրենց ազրեսիվ գործողություններից, իսկ մենք ունեցանք երկու թերեւ վիրավոր եւ չտվեցինք ոչ մի գոհ, դյանով իսկ ապացութեցինք, որ թշնամուն կարելի է հաղթել ոչ միայն քանակով, այլև որակով: Միենույն ժամանակ այդ ճակատամարտի հետ կապված իրադարձությունները նորից ակնհայտ դարձրին այն ժամանակվա մեր ինքնապաշտպանության մեխանիզմի անհերետությունը, եթե երկու պաշտպանության ու բնակչության անվտանգության ապահովման հարցերի լուծումը կախված էր ոչ թե միասնական ռազմական մարմնից եւ մի բռունքը ներկայացնող կամավորական բանակից, այլ իրենց կամայականությամբ գործող ֆիդայական ջոկատների ու նույն կամավորական սկզբունքով գործող առանձին անհատների կամքից, որոնցից մեկն էլ ես էի:

ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԳՎԱՐԴԻԱ ՍՏԵՂՇԵԼՈՒ ՄՏԱՐԴԱՑՄԱՆ ԵՎ ԻՄ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՏՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

